Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.23/[354472]-16

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄՈՏ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ԻՆ ԺԱՄԸ 18:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ՓՈՔՐ և ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գ. Մելքոնյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ս. Մարտիրոսյան	«Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» ՀԿ-ի նախագահ
Փ. Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Ց. Գևորգյան	«Հայաստանի վաճառականների միություն» ՀԿ-ի նախագահ

Մասնակիցներ՝

Գ. Խաչատրյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարար
Հ. Հովսեփյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Գ. Պողոսյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Մ. Ղամբարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Տ. Աբրահամյան	«Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Գ. Պետրոսյան	«Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Գ. Պողոսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Ա. Օհանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետ
Ա. Ալեքսանյան	Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
Մ. Ժամկոչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության գործադիր տնօրեն

Հրավիրվածներ՝

Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Դ. Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ի. Հովհաննիսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Լ. Չեխանովսկի	ԵՄ ծրագրի ղեկավար
Դ. Միրզոյան	ԵԱՀԿ ծրագրերի ազգային համակարգող
Է. Սաֆարյան	ԵԱՀԿ տնտեսական ծրագրի ազգային պատասխանատու
Դ. Սարումովա	Եվրոպական բիզնես ասոցիացիայի տնօրեն

1. Նախորդ նիստի արդյունքների ամփոփում

1.1. Հյուրատնային գործունեությամբ զբաղվողներին ընտանեկան ձեռնարկատիրության ռեժիմից օգտվելու հնարավորության սահմանման մասին

(Գևորգ Պողոսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գևորգ Պողոսյանի զեկուցումն այն մասին, որ Հյուրատնային գործունեությամբ զբաղվողներին ընտանեկան ձեռնարկատիրության ռեժիմից օգտվելու հնարավորության սահմանման հետ կապված խնդիրը լուծված է, որի արդյունքում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» N ՀՕ- 146-Ն ՀՀ օրենքը:

1.2. ՓՄՁ-ների և խոշոր կազմակերպությունների համար տեղական տուրքերի տարանջատված չափերի սահմանման մասին

(Գևորգ Պողոսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ առաջարկել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին և հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Արծվիկ Մինասյանին՝ համատեղ քննարկել ՓՄՁ-ների և խոշոր կազմակերպությունների համար տեղական տուրքերի տարանջատված չափերի սահմանման հարցը և ըստ այդմ «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը (հնարավորություն տալով ՏԻՄ-երին բացի տեղական տուրքերի բազային դրույքաչափերի

նկատմամբ գործակիցներ սահմանելիս՝ գոտիականության չափանիշի կիրառումից հաշվի առնել տվյալ առևտրի կետի մակերեսը) սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

2.Փոքր արժեքի ապրանքների մաքսավճարների վերանայման մասին

2.1. Ներմուծման ընթացքում փոքր արժեքի ապրանքների մաքսավճարների վերանայման մասին

2.2. Արտահանման ընթացքում փոքր արժեքի ապրանքների մաքսավճարների վերանայման մասին

(Գևորգ Պողոսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Արծվիկ Մինասյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանի և ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանի հետ համատեղ քննարկել ՀՀ ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարության կողմից ներկայացված առաջարկը՝ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ ամրագրելու հարցի վերաբերյալ՝

ա. որպեսզի մեկ հասցեով, մեկ տրանսպորտային /փոխադրման/ փաստաթղթով ապրանքների ներմուծման կամ արտահանման դեպքում, եթե այդ ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում 200 եվրոյին համարժեք դրամը, մաքսավճարներ չեն գանձվում,

բ. որպեսզի այդ ձևակերպումները կարողանան իրականացնել նաև ապրանքները ներմուծող կամ արտահանող իրավաբանական անձինք՝ առանց մաքսային ներկայացուցչի ներգրավման և այդ դեպքերի համար հայտարարագրի ձևաթղթից հանվի որակավորված մասնագետի վերաբերյալ նշում կատարելու պարտադիր պահանջը (որակավորման լիցենզիայի համարը).

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Մակար Ղամբարյանին՝ 1-ին կետում նշված իրավական ակտի նախագիծը համաձայնեցնել շահագրգիռ գերատեսչությունների հետ:

3. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի հիման վրա փոխկապակցվածության որոշման հետ կապված խնդրի մասին

(Փայլակ Թադևոսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանին՝ տրամադրել տեղեկատվություն՝ ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2015 թվականի նոյեմբերի 24-ի «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N ՀՕ-167-Ն ՀՀ օրենքի ընդունումից հետո մինչև 2016 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում ներկայացված խնդրի, մասնավորապես, փոխկապակցվածության հիմքով տնտեսավարողներին առաջադրված տույժերի, տուգանքների վերաբերյալ (ըստ տնտեսավարողների թվաքանակի և առաջադրված տույժերի, տուգանքների ծավալի և այլնի):

4. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6^1-րդ հոդվածի կիրառության հետ առաջացած խնդիրների մասին

(Հակոբ Ավագյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Հովհաննես Հովսեփյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանի, ՀՀ էկոնոմիկայի նախարար Արծվիկ Մինասյանի, ՀՀ ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարության և շահագրգիռ այլ կողմերի հետ համատեղ քննարկել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6^1-րդ հոդվածի կիրառության արդյունքում առաջացած խնդիրը, դրա ազդեցության չափը ՀՀ պետական բյուջեի վրա և առաջարկությունը ներկայացնել խորհրդի հաջորդ նիստին քննարկմանը:

5. ՓՄՁ զարգացման խորհրդի նոր անդամի ներգրավման մասին

(Գարեգին Մելքոնյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ՓՄՁ զարգացման խորհրդի նոր անդամների՝ Անդրանիկ Ալեքսանյանի և Մարինե Ժամկոչյանի թեկնածությունները:

6. Այլ հարցեր

(Գևորգ Պողոսյան, Հակոբ Ավագյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար պարոն Արծվիկ Մինասյանին՝ քննարկել ՀՀ-ում Ազգային Բիզնես Ինկուբատորի ստեղծման վերաբերյալ առաջարկությունը, համաձայնեցնել շահագրգիռ մարմինների հետ և խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը ներկայացնել առաջարկություն.

2) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար պարոն Գագիկ Խաչատրյանին՝ ուսումնասիրել ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի վերաբերյալ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի կողմից ներկայացված առաջարկությունները և դիտողությունները, ինչպես նաև հարկային մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա իրականացվող ստուգումների և ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի վերանայման առաջարկը՝ դրանք խորհրդի հաջորդ նիստում քննարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ